

## Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԹՎԱՆՇԱՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ  
(ԹՎԱՆՇԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի բաղկացուցիչ մաս կազմող հայաստառ գրադարանային հավաքածուների թվանշանային տարբերակի (այսուհետ՝ թվանշանային գրադարան) կազմակերպման և համակարգման հետ կապված հարաբերությունները:

2. Թվանշանային գրադարանի ստեղծման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության գրավոր ժառանգության մաս կազմող հայաստառ, ինչպես նաև Հայաստանի ու հայերի վերաբերյալ (այսուհետ՝ հայագիտական) համակարգված տեղեկությոց օգտվելու հնարավորության ապահովումն է:

3. Հայաստանի ազգային գրադարանը կազմակերպում և համակարգում է թվանշանային գրադարանի ստեղծման աշխատանքները:

4. Թվանշանային գրադարանի գործունեությունը ներառում է տեղեկույթի հավաքումը, մշակումը, միասնական ձևաչափին համապատասխանեցումը և սույն կարգով ու այլ իրավական ակտերով սահմանված նպատակներով շրջանառության մեջ դնելը:

5. Թվանշանային գրադարանը կազմվում է հրապարակման ենթակա գրադարանային փաստաթղթի բովանդակության թվայնացված պատճենից և մատենագիտական գրացուցակից (մետա տվյալներ):

6. Թվանշանային գրադարանն ստեղծվում է՝ պահպանելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

II. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Սույն կարգում օգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները՝

**1) թվանշանային գրադարան**՝ համապատասխան ծառայություններով հագեցված այնպիսի տվյալների կառավարելի հավաքածու, որը պահվում է թվային ձևաչափով և մատչելի է համակարգչային ցանցի օգնությամբ.

**2) թվանշանային գրադարանի սրբերծում**՝ բազմափուլ գործընթաց, որը ներառում է համապատասխան սարքաշարերի ու ծրագրաշարերի ձեռքբերումն ու տեղակայումը ծրագրատեխնիկական միջավայր, ինչպես նաև հայագիտության վերաբերյալ տեղեկություն տիրապետող և տրամադրող անձանցից (իրավաբանական և ֆիզիկական) այդ տեղեկության ստացման ու նյութերի շուրջօրյա հասանելիության և դրանց ավտոմատ արխիվացման հնարավորության ապահովումը.

**3) թվանշանային գրադարանի պաշարներ**՝ գրադարաններում հավաքված՝ հայատառ, Հայաստանի և հայերի մասին փաստաթղթերի ամբողջություն.

4) **օգտատերեր**՝ թվանշանային գրադարանի ծառայություններից օգտվող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

III. ԹՎԱՆՇԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Թվանշանային գրադարանի ձևավորման առաջնահերթություններն են՝

1) գրավոր հուշարձանները.

2) փորձաքննությամբ արժևորված փաստաթղթերը.

3) պարտադիր օրինակները, որոնք ունեն առանձնահատուկ պատմական, գիտական, մշակութային նշանակություն.

4) հայագիտական գրադարանային փաստաթղթերը:

9. Գրադարանային փաստաթղթի թվանշանային տարբերակն ստեղծվում է երկու օրինակից.

1) «Մայր օրինակ»՝ փաստաթղթի բարձր որակի պատկեր, որը նախատեսված է երկարաժամկետ պահպանության և որակյալ տպագրության համար.

2) «Աշխատանքային օրինակ»՝ փաստաթղթի ցածր որակի պատկեր՝ համացանցում դիտելու համար:

10. Թվանշանային գրադարանի պաշարները ձևավորվում են՝

1) ազգային գրադարանային հավաքածուից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից թվայնացված և Հայաստանի ազգային գրադարանին անհատույց տրամադրված թվային պատճեններից.

3) Հայաստանի ազգային գրադարանի կողմից գնմամբ ձեռք բերված թվային պատճեններից.

4) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) համաձայնությամբ թվային պատճենների փոխանակությունից:

11. Սույն կարգի 10-րդ կետի 4-րդ ենթակետի իրականացման համար թվանշանային գրադարանի պաշարներ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք նախարարություն են ներկայացնում փոխանակման ենթակա թվանշանային գրադարանի պաշարների մասին տեղեկույթ: Այն 5-օրյա ժամկետով ուղարկվում է Հայաստանի ազգային գրադարան՝ տեղեկույթի համարժեքության և սույն կարգի 2-րդ կետի պահանջներին համապատասխանության հարցի քննարկման նպատակով: Հայաստանի ազգային գրադարանը տալիս է եզրակացություն ներկայացված տեղեկույթի փոխանակության համարժեքության կամ անհամարժեքության մասին: Ներկայացված եզրակացության հիման վրա նախարարությունը տալիս է համաձայնություն կամ մերժում է թվային պատճենների փոխանակությունը: Համաձայնության առկայության

դեպքում Հայաստանի ազգային գրադարանը ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքում է պայմանագիր թվային պատճենների փոխանակության մասին:

12. Թվանշանային գրադարանը գործում է շուրջօրյա՝ ապահովելով պահպանվող տեղեկույթի անվտանգությունն ու օգտատերերի հետ անխափան կապը:

#### IV. ԹՎԱՆՇԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

13. Թվանշանային գրադարանն ապահովում է հայատառ և հայագիտական թվայնացված օրինակի օգտագործումը՝ ինչպես գրադարանում, այնպես էլ՝ առցանց:

14. Հայատառ և հայագիտական գրադարանային փաստաթղթերի մատենագիտական գրացուցակը (մետա տվյալներ) օգտատերերին տրամադրվում է ազատ դիտման կարգավիճակով:

15. Թվանշանային գրադարանի առկա պատճեններն օգտատերերին տրամադրվում են ազատ դիտման կարգավիճակով (անվճար)՝ ներբեռնելու և պատճենելու հնարավորությամբ՝ բացառությամբ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

16. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա տրամադրվող թվանշանային գրադարանի առկա պատճեններից ներբեռնելու և պատճենելու հնարավորությունը տրամադրվում է պայմանագրային հիմունքներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ